Պարույր Սևակ

Անվերնագիր 22

Ողջը այս է. մի ջերմ հայացք անբարբառ ու անհանգիստ,
Որ փնտրում է ու քեզ գտնում փողոցների մայթերում,
Ուղեկցում է հեռվից-հեռու ինքնավստահ քայլվածքիդ,
Որ փոշու մեջ հետքն է թողնում, իսկ դրոշմը՝ սրտերում:
Այնուհետև՝ փակ կոպերս քեզ ծածկում են իրենց տակ...
Կոպերիս տակ այնքա՜ն ծանոթ քո քայլվածքը զգալով,
Քեզ հետ մեկտեղ, քեզնից հեռու՝ ես քայլում եմ գլխահակ,
Թեկուզ մի բառ քեզ ասելու փորձությանը անկարող:
Աշնան օրը ծանրանում է իմ հայրենի քաղաքում,
Իրիկվա հետ ստվերները երկարում են մայթերին:
Ստվերի պես՝ դու-օրորո՜ւն, դու-շորորո՜ւն, բեկբեկո՜ւն՝
Մե՛րթ՝ մոտենում, մերթ ինձանից հեռանո՜ւմ ես, խո՛ւյս տալիս:
Մոտենում ես կիսամթնում, ծածկերի տակ խանութի,
Հեռանում ես՝ լապտերների մոտիկությունն զգալով:
Ահա այսպես՝ ես քայլում եմ քեզնից հեռու և մոտիկ՝
Շշուկով իսկ քեզ կանչելու փորձությանը անկարող...
Եվ ինչ լա՜վ է, ինչ լա՜վ է, որ բանաստեղծ եմ ես, անգին,
Եվ չակնարկած անգամ թեթև, մի խոսք չասած քեզ կյանքում,
Ես կարող եմ երգեր գրել ստվերների՛, պատրանքի՛,
Կոպերի տակ լուռ ամփոփված սիրո՜ մասին այս թաքուն:

VI.1946թ. 09.VII.1951թ.

Երևան